


Մ Ե Ր

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆԳ ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ



338(47)

Մ-66

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴԻ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿ. ՄՈՍԿՎԱ, 1929

33847

Մ-66

17 FEB 2010

Լ. Գ.



ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳ ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ, ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԽՈՅԿՎԱ, 1929

28 JUN 2013

29.136



42655-63

Главлит № А 41082.

Зак. № 1000.

Тираж 4000.

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Ամբողջ խորհրդային Միության մեջ կատարվում է շինարարական մեծ գործ: Կառուցվում են նոր գործարաններ, ֆաբրիկներ, դպրոցներ: Կառուցվում են ելեքտրական կայաններ: Անց են կացվում յերկաթուղիներ:

Սովի և քայքայման ծանր տարիները վաղուց արդեն անցել են: Խորհրդային տնտեսությունը ցարական Ռուսաստանի տնտեսությունից արդեն առաջ է գնացել: Իսկ այժմ մենք պետք է շարունակենք կառուցել և ամրացնել Խորհրդային Միությունը:

Կոմունիստական կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը քննել և հաստատել են մեր տնտեսության զարգացման հինգամյա պլանը:

Կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը պլանի մեջ մեծ խնդիրներ են դրել մեր առաջ: Հինգ տարվա ընթացքում մենք պետք է լայն ծավալենք մեր շինարարությունը: Մենք պետք է գրոհ տանք մեր տնտեսական յետամնացություն դեմ, ամեն տեսակ թերությունների դեմ, մեր աղքատության դեմ: Մենք պետք է վերակառուցենք մեր տնտեսությունը և հասցնենք չտեսնված բարձրության: Խոր-

հրդային տնտեսությունը պետք է հասնի և ապա
նույն իսկ առաջ անցնի կապիտալիստական առաջա-
դեմ յերկրներին:

Այդ խնդիրները դժվար են: Բայց լուծել մենք
կարող ենք: Բանվոր դասակարգն ու աշխատավոր
գյուղացիությունը մեր կուսակցության ղեկավարու-
թյամբ արդեն հաղթել են շատ դժվարություններ:
Մենք կհաղթենք նաև բոլոր նոր դժվարությունները:

Անհրաժեշտ է, վորպեսզի բոլոր բանվորներն ու
գյուղացիները ծանոթանան հինգամյա պլանի հետ և
քննեն այն: Անհրաժեշտ է, վորպեսզի պլանը ստու-
գեն և իրականացնեն գործարաններում, ֆաբրիկնե-
րում, դաշտերում:

Պլանի մեջ պատասխան է տված մեր տնտեսու-
թյան վերաբերյալ բոլոր հարցերին: Ի՞նչ և ո՞ւր պետք
է կառուցել: Ինչպե՞ս է զարգանում գյուղական
տնտեսությունը: Ինչպիսի՞ դժվարություններ են
սպասում մեզ առաջիկայում: Պլանը կազմված է նրա
համար, վորպեսզի ոգնի մեզ՝ տնտեսությունը զարգա-
ցնելու և ուղիղ ճանապարհով տանելու:

ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՀՍԿԱ-ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Խորհրդային ընդարձակ Միության բոլոր անկյուն-
ներում շինարարական աշխատանքները շարունակ-
վում են: Որ որի վրա ավելի ուժգին է հնչում մուրճերի

և կացինների ձայնը: Քաղաքներում և գյուղերում
որ որի վրա ավելի լայն է ծավալվում շինարարու-
թյունը:


Այդ աշխատանքում ամենից ուժգին հնչում է մե-
տաղի ձայնը: Խորհրդային տնտեսությանը հարկավոր
է մետաղ-չուգուն, յերկաթ, պողպատ: Առանց մետաղի
վոչ մի գործարան չի կարելի կառուցել: Առանց մե-
տաղի վոչ մի, նույն իսկ ամենահասարակ մեքենա
չի կարելի շինել: Տնտեսության հիմքը — մետաղն է:
Ուստի և հինգամյա պլանում առաջին տեղը հատ-
կացված է մետաղին: Հինգ տարվա ընթացքում մենք
պետք է արտադրենք վորքան կարելի յե շատ յեր-
կաթ, չուգուն, պողպատ: Հինգ տարվա ընթացքում
մենք պետք է վճռական հարված հասցնենք մեր
յետաձևացության: Իսկ այդպիսի հարված կարելի յե
հասցնել միմիայն մետաղով:

Պլանը նիշում է նոր խոշոր մետաղագործա-
րանների անհապաղ կառուցման ձեռնարկում:

Կառուցումն արդեն սկսվել է: Սիբիրում Տելբես
գյուղաքաղաքի շրջակայքում դեռ մի տարի առաջ
ամալի եր և խաղաղ:

Յեվ ահա յերևան յեկան շինարարների ամբողջ
զորաբանակ: Գոյացան աղյուսի սարեր: Խուլ և ամալի
վայրը անձանաչելի դարձավ: Մուրճի հարվածների
տակ որ որի վրա շինություններ են բարձրանում:
Բազմաթիվ շինություններ — մի ամբողջ քաղաք:

Յերեք տարուց հետո - այստեղ ծխելու յե հսկա-
գործարանը: Այստեղ աշխատելու յեն չորս հազար
բանվորներ: Մի տարվա ընթացքում գործարանը
հալելու յե 320 հազար տոնն չուգուն (19 և կես
միլիոն փութ. մի տոննը ունի 61 փութ):



Չուգունի արտադրությունը (այժմ և 1933 թ.)

Չուգունի այդ վիթխարի քանակությունը հերիք
կանի հազարավոր պարավոզների, ստանոկների, տրակ-
տորների և այլ մեքենաների համար:

Բայց Տեղբեսի հսկա-գործարանը միակը չի լինելու:
Ուրալում, Ուկրաինայում, Ղրիմում յերեք մե-
տաղագործարան և կառուցվում: Նրանք ավելի խոշոր
են լինելու քան Տեղբեսի գործարանը:

Հինգ տարվա ընթացքում մետաղ հալող 18 գոր-
ծարան և կառուցվելու: Հինգ տարուց հետո խորհրդ-
դային տնտեսությունը յերեք անգամ ավելի մետաղ
և ունենալու քան այժմ:

1928 թ. հալված և 3 միլիոն 30 հազար տոնն
չուգուն:

1933 թ. հալվելու յե 10 միլիոն տոնն:

ՄԵԶ ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՄԵՆՔ ԿԱՐՏԱԳՐԵՆՔ

Մետաղի ավելացումով ավելանալու յե նաև գա-
նազան մեքենաների արտադրությունը:


Խորհրդային տնտեսությունը վոչ թե տարիներով
այլ որերով և աճում: Նույնչափ արագ և աճում և մեքե-
նաների պահանջը: Մեր ունեցած գործարանները պա-
հանջը բավարարել չեն կարողանում: Հարկավոր և նոր
գործարաններ կառուցել մեքենաներ շինելու համար:

Շատ մեքենաներ մենք ստանում ենք արտասահ-
մանից: Սակայն ԽՍՀՄ տնտեսությունը պետք և
ինքնուրույն լինի: Մենք չպետք և կախումն ունենանք
մեր թշնամիներից — ոտաբյերկրյա կապիտալիստանե-
րից: Մեր արդյունաբերությունը պետք և կարգի գցի
մեքենաների սեփական արտադրությունը:

Հինգամյա պլանը այդ հաշվով ել կազմված և:

Պլանը նիշում և Խորհրդային Միության գանազան
տեղերում մեքենաների արտադրության համար 33

գործարանների կառուցումն: Այդ գործարաններից շատերն արդեն կառուցվում են: Ամենախոշոր գործարանի կառուցումն ավարտվում է Ռոստովում (Դոնի վրա): Ռոստովի գործարանի նման խոշոր գործարաններ ամբողջ աշխարհում մասներով կարելի չէ հաշվել: Այդ գործարանը մի տարվա ընթացքում արտա-



Դյուդառնտեսական մեքենաների արտադրությունը (այժմ և 1933 թ.)

դրելու յե գյուղական տնտեսություն համար 70 միլիոն ռուբլու գանազան անհրաժեշտ մեքենաներ — ցանիչներ, հնձիչներ, գութաններ և այլն:

Լուգանսկ քաղաքում կառուցվում է մի գործարան, վորը մի տարվա ընթացքում 350 պարավոդ է տալու:

Ուրալում և Նիժնի Տադիլում նոր գործարանը 12 հազար վագոն է բաց թողնելու:

Սվերդլովսկում յերկու տարուց հետո նոր գործարան է բացվելու, վորը մեր ֆաբրիկների համար գանազան մեքենաներ և ստանոկներ է շինելու:

1928 թ. մենք 735 միլիոն ռուբլու մեքենաներ շինեցինք. 1933 թ. շինելու յենք 2 և կես միլիարդ ռուբլու մեքենաներ (1 միլիարդը հազար միլիոն ռանի):

Հետևաբար, հինգ տարուց հետո յերեք ու կես անգամ ավելի մեքենաներ ենք շինելու քան թե այժմ:

Ահա թե ինչ ուղիով է առաջ գնալու մեր տնտեսությունը: Ավելի շատ հյուսող ստանոկներ, մանող մեքենաներ: Ավելի շատ պարավոդներ և այլ մեքենաներտրակտորներ, ցանիչներ, հնձիչներ գյուղի համար՝ պապենական բրիչի և խոփանի փոխարեն:

ԿՐԿՆԱՊԱՏԿԵԼ ԱԾՈՒՆԻ ԱՐՏԱԴՐՈՒՄԸ

Ուկրայինայում մեծ տարածություն վրա հողի տակ քարածուխի հարուստ հանք կա:

Դա — Դոնի ածուխի ավազանն է (Դոնբաս):

Այնտեղից են ստանում մեր ֆաբրիկների ու գործարանների մեծ մասը վառելիք-ածուխը:

Դոնբասում ածուխ հանելու համար շախտաները շինել են ցարական որերում կապիտալիստները: Կապիտալիստները Դոնբասը կառուցել են 40 տարի:

Կառուցել են վայրիվերո, ինչպես վոր ավելի ձեռնտու-
յեր իրենց համար և վոչ թե ժողովրդական տնտե-
սության համար:

Պորհրդային Միության բանվոր դասակարգն իր
տնտեսությունը այնպես չի կառուցում, ինչպես կա-
պիտալիստները:

Պլանը նիշում ե, վոր Դոնբասում հինգ տարվա ըն-
թացքում այնքան նոր շախտաներ պետք ե շինվին, վոր-
քան վոր կապիտալիստները շինել են 40 տարվա ըն-
թացքում: Դոնբասը կրկնակի աճելու յե: Շախտաները
ամենալավ մեքենաներն են ունենալու: Պորհրդային
տնտեսությունը Դոնբասից ահազին քանակությամբ
ածուխ ե ստանալու: Յեթե մի տարվա ընթացքում
հանած ածուխը բարձենք վագոնների վրա, այդ վագոն-
ները չորս հազար կիլոմետր տեղ կբռնեն (կիլոմետրը
մոտ մի վերստ ե):

Բացի Դոնբասից նոր շախտաներ են շինվելու նաև
ածխով հարուստ Սիբիրում, Ուրալում, Մոսկվայի շրջա-
կայքում: Մոսկվայի շրջակայքի ածուխի շերտերը մինչև
այժմ շատ քիչ են մշակված: Հինգ տարվա ընթաց-
քում այդ ածուխի մշակումը պետք ե հնգապատկել:

Դա մեզ համար բավական փող կտնտեսի: Կարիք
չի լինի ածուխը Դոնբասից կամ Ուրալից փոխադրել
Մոսկվայի ֆաբրիկաների և գործարանների համար:

Պորհրդային մեծ շինարարությունը տարեց տարի
լայնանալու յե:

Տարեց տարի ֆաբրիկաներն ու գործարանները
ավելի ու ավելի շատ ածուխ են պահանջելու: Յեվ
յեթե ածուխը հերիք չանի, նոր ֆաբրիկաների և գոր-
ծարանների շինարարությունը կանգ կառնի:

Ուստի և պլանի մեջ ածուխի արտահանումը, մե-
տաղի և մեքենաների շարքում, գլխավոր տեղ ե բռ-
նում: Ածուխը, մետաղի և մեքենաների հետ միասին,
մեր տնտեսության հիմքն ե:

Հինգ տարվա ընթացքում ՆՍՀՄ մեջ ածուխի
արտադրանքը կրկնապատկվելու յե:

1928 թ. արտադրված ե 35 միլիոն տոննա ածուխ.

1933 թ. արտադրվելու յե 75 միլիոն տոննա:

ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ԵԼԵՔՏՐՈԿԱՅԱՆՆԵՐ

Մետաղի, մեքենաների և շատ ուրիշ գործարան-
ներ ու ֆաբրիկաներ իրենց աշխատանքի համար ահա-
զին շարժիչ ուժ են պահանջում: Այդ ուժը առ-
այժմ գլխավորապես վառելիքն ե: Ածուխ, նավթ,
տորֆ են այրվում պարավոզների վառարաններում և
շարժ են բերում մեքենաներն ու ստանոկները:

Սակայն կա և ուրիշ շարժիչ ուժ: Դա — էլեքտրա-
կանությունն ե: Նա կարող ե շարժ բերել բոլոր մե-
քենաները, փոխադրել բեռներ, բարձրացնել ծան-
րություններ, մի խոսքով՝ ամեն տեսակ աշխատանք
կատարել:

Ապացուցված է, վոր ելեքտրականությունը — եժան և շահավետ շարժիչ ուժ է: Այդ ուժը կարող է յերկրի տնտեսությունը արագ բարձրացնել: Խոշոր ելեքտրոկայանները իրենց ուժով փոխարինում են մի քանի միլիոն բանվորների ուժի:

Ելեքտրականության ահագին նշանակությունը մեր տնտեսության համար — շեշտել է Վ. Ի. Լենինը: Նա ասում էր. —

«Կոմունիզմը — դա Խորհրդային իշխանությունն է պլյուս ելեքտրիֆիկացիան»: Դա նշանակում է, վոր տնտեսությունը բարձրագույն աստիճանի հասցնել և յերկիրը կոմունիզմին հարել կարող է միայն Խորհրդային իշխանությունը: Իսկ տնտեսությունը բարձրագույն աստիճանի հասցնելու միջոցը — ելեքտրոֆիկացիան է, այսինքն՝ ֆաբրիկները, գործարանները, գյուղական տնտեսությունը ելեքտրականությունով գործի դնելն է:


1922 թ. Լենինի ցուցմունքով մշակվեց ԽՍՀՄ ելեքտրիֆիկացիայի ծրագիրը: Քաղաքացիական պատերազմից հետո մենք անմիջապես սկսեցինք այդ ծրագրի համեմատ ելեքտրոկայաններ կառուցել:

Այն ժամանակ կառուցելը շատ դժվար էր: Յերկիրը քայքայված էր: Մեծ զրկանքներով, մեծ դժվարություններով բանվոր դասակարգն Իլիչի ցուցմունքը իրականացրեց:

Մենք արդեն 14 խոշոր կայաններ ենք կառուցել:

Իսկ հինգ տարվա ընթացքում ըստ հինգամյակի պլանի նիշված է 43 խոշոր կայանների կառուցումն, դրանցից 30 արդեն կառուցվում են:

Դենսար գետի վրա մենք կառուցում ենք հզոր ելեքտրոկայան — Դենսարոստրոյ: Դա աշխարհիս ամենախոշոր կայաններից մեկն է լինելու: Դենսարի ջուրը



Ելեքտրոկայանների աճումը (այժմ և 1933 թ.)

շրջելու յե զորավոր մեքենաներ, վորոնք կտան ելեքտրականություն: Դենսարոստրոյի ուժը հավասար է լինելու 800 հազար ձիու ուժի: Դենսարոստրոյն փոխարինելու յե 20 միլիոն բանվորների ուժի:

Կայանի շրջանում արդեն մեկը մյուսի յետևից բանում են գործարաններ: Կառուցվում են յերեք

մետաղի գործարաններ, մի քանի գործարաններ ել՝ պարարտացման նյութեր արտադրելու համար, վորոնք անհրաժեշտ են գյուղական տնտեսութեան մեջ: Այդ բոլորը գործելու յեն Դնեպրոստրոյի ուժով: Բացի այդ, Դնեպրոստրոյը տալու յե գյուղերին լույս և մեքենաներին՝ ուժ: Դնեպրոստրոյի ելեքտրականութեամբ բանելու յեն կալիչներ, հնձիչներ և ուրիշ յերկրագործական մեքենաներ:

Յեւ այդպես ամեն մի ելեքտրոկայանի շուրջը ծաղկելու յեն մի քանի նոր ֆաբրիկներ և գործարաններ: Իսկ ամեն մի կայան գյուղերին լույս և մեքենաներին ուժ ե տալիս:

ԽՍՀՄ ելեքտրիֆիկացիայի գործում մենք մեծ հաջողութիւններ ձեռք բերինք: Այդ հաջողութիւնները ամբողջ աշխարհին ցոյց են տալիս, վոր բանվոր դասակարգը կապիտալիստներին արտաքսելով կարող ե արագ բարեփոխել տնտեսութիւնն ու նոր կյանք ստեղծել:

Կապիտալիստական վոչ մի յերկիր չի կարող այդպես արագ և այդպես լայն թափով կառուցել իր տնտեսութիւնը:

ԱՊՐԱՆՔՆԵՐ ՔԱՂԱՔԻՆ ՅԵՎ ԴՅՈՒՂԻՆ

Մետաղը, մեքենաները, ածուխը, ելեքտրական կայանները — դրանք խոշոր, ինչպես ասում են, ծանր արդյունաբերութիւնն ե:

Մետաղագործարաններ, ելեքտրոկայաններ, վառելիք — դրանք խորհրդային տնտեսութեան հիմքն են կազմում: Տնտեսութեան բոլոր մասերը, բոլոր ճյուղերը այդ հիմքից են կախված: Յեւ հարկավոր ե բոլոր ուժերով ամրացնել և լայնացնել այդ հիմքը:

Պլանը նիշում ե ամենից առաջ չուգունի, մեքենաների, ածուխի արտադրումն և ելեքտրոկայանների կառուցումն:

Հետևաբար հինգամյա պլանը ուղիղ ե կազմված: Նա տանում ե մեզ ծանր արդյունաբերութեան զարգացման ուղիով:

Տնտեսութեան կառուցման գործում մենք շատ դժվարութիւններ ունենք: Բայց դրանք կարելի յե հաղթել միայն այն ժամանակ, յերբ շատ չուգուն և պողպատ, մեքենաներ, ածուխ կունենանք, յերբ կկառուցվեն խոշոր ելեքտրոկայաններ:

Մեր տնտեսական դժվարութիւններից մեկը այս բոպէին — ապրանքների պակասութիւնն ե:

Ապրանքներ պակասում են վոչ թե այն պատճառով, վոր նրանց արտադրումը կրճատվել ե: Արտադրումը տարեց տարի ավելանում ե: Բայց ավելի արագ ե աճում և ապրանքների պահանջը: Մեր յերկրի աղգաբնակչութեան թիւը Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո ավելացել ե ավելի քան 35 միլիոնով: Բացի այդ, բանվորների աշխատավարձը ավելացել ե: Նշանակում ե բանվորներն ավելի շատ ապ-

բանքներ են պահանջում: Քայքայման տարիներից հետո խորհրդային գյուղը վտաքի յե կանգնում: Ուստի և մանավանդ գյուղացիները շատ ապրանք են պահանջում:

Յեւ պահա ծագում է ապրանքների պակասութիւնը վերացնելու հարցը: Անհրաժեշտ է և պետք է տալ բանվորներին և գյուղացիներին բավականաչափ մանուֆակտուրա, կոշիկներ և այն բոլորը, ինչ վոր հարկավոր է առօրյա կյանքում:

Հինգամյակի պլանում ցույց է տված թե ինչպես պետք է իրագործել այդ հարցը:

Խորհրդային տնտեսութիւնը տարեց տարի ավելի ու ավելի չուգուն, մեքենաներ և վառելիք է ունենալու: Դա հնարավորութիւն կտա տեքստիլի, կոշիկների և այլն նոր գործարաններ կառուցելու:

Չուգունի հալման և մեքենաների արտադրման աճումը թույլ կտա մեզ հինգ տարվա ընթացքում 35 տեքստիլ, 31 մանող, 15 մահուղի և բրդի կտորեղենների ֆաբրիկներ կառուցել: Կառուցվելու յեն 19 շաքարի գործարաններ: Կոշիկների արտադրումը համարյա չորս անգամ ավելանալու յե: Նոր ֆաբրիկների և գործարանների հետ միաժամանակ բարենորոգվելու են և լայնանալու յեն հները:

Հինգ տարուց հետո ապրանքների պակասութիւն չի լինելու:

100 ՀԱԶԱՐ ՏՐԱԿՏՈՐՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ՎՐԱ

Մեր տնտեսութիւն յերկրորդ դժվարութիւնը — հացի պակասութիւնն է: Հացը ավելի պակաս չի բանում քան առաջ: Սակայն ամեն տարի ավելանում է 3 միլիոն ժողովուրդ: Արդյունաբերութիւնը արագ աճում է: Արագ աճում է նաև հացի ու սննդանյութերի պահանջը: Իսկ գյուղական տնտեսութիւնը զարգանում է դանդաղ, շատ ավելի դանդաղ քան արդյունաբերութիւնը:

Գյուղական տնտեսութիւն այդ յետամնացութիւնը շատ դժբախտութիւններ է սպառնում: Հացի, բրդի, թելերի, կաշվի պակասութիւնը կարող է ամբողջ շինարարութիւնը խախտել:


Անհրաժեշտ է գյուղական տնտեսութիւն զարգացումն արագացնել:

Պետք է արագ բարձրացնել մեր գյուղի դրութիւնը: Ինչպե՞ս պետք է անել այդ:

Կա միայն մեկ ուղի — ծանր արդյունաբերութիւն զարգացումը:

Գործարաններն ու ֆաբրիկները պետք է հզոր լսթան տան գյուղական տնտեսութիւն զարգացման համար: Բանվոր դասակարգը պետք է ոգնի խորհրդային գյուղին, վորպեսզի նա կարողանա վերջ տալ կարիքին և յետամնացութիւն:

48655-13



Ստալինգրադում կառուցվում է տրակտորի հսկա-
գործարան:

Տարվա ընթացքում նա տալու յե 40 հազար տրակ-
տոր: Լենինգրադի «Կարմիր Պուտիլովեց» գործա-
րանը հինգ տարուց հետո բաց է թողնելու տարեկան
10 հազար տրակտոր (այժմ բաց է թողնում տարե-
կան 3 հազար): Կառուցվելու յե տրակտորի մի գոր-
ծարան ևս Ուրալում:

Առայժմ մենք ունենք 30 հազար տրակտոր: Հինգ
տարուց հետո 130 հազար տրակտորներ ափսեյու յեն
խորհրդային դաշտերը, հնձելու յեն, կալսելու յեն, կա-
տարելու յեն գյուղական ամեն տեսակ աշխատանք:


Յուրաքանչյուր տրակտոր փոխարինում է իր ուժով
30 ձիու: Հաշվեցեք, ուրեմն, թե մեր գործարանները
ինչ վիթխարի քանակությամբ բանվոր ուժ են տալու
գյուղական տնտեսությանը՝ տրակտորների շնորհիվ:

Մեր գյուղերում յուրաքանչյուր 100 գյուղա-
ցիական ընտանիքից 30-ը լծկան չունի: Ինչպես
պետք է ողնել չքավորներին, նրանց կարիքը բավա-
րարել: Պետք է տալ նրանց տրակտորներ և ուրիշ
մեքենաներ: Պապենական բահի ու բրիչի փոխարեն
պետք է տալ նրանց կալսիչ, հնձիչ, ցանիչ մեքե-
նաներ:

Արդյունաբերության մեքենաները կտա գյու-
ղին: Այդ մեքենաների մեծ մասը բաց է թողնելու
Ռուստովի գործարանը: Նրա մասին մենք արդեն խո-

սել ենք: Բացի դրանից, գործարաններ կառուցվելու
յեն Ուրալում, Ուկրաինայում, Կովկասում, Վոլգայի
վրա և մի քանի ուրիշ շրջաններում:

1928 թ. մենք բաց յենք թողել 150 միլիոն ուրբու-
գյուղատնտեսական մեքենաներ: 1933 թ. բաց ենք
թողնելու 500 միլիոն ուրբուգյուղատնտեսական մե-
քենաներ:



Տրակտորների թվի աճումը (այժմ և 1933 թ.)

Այժմ մի հեկտար հերկադաշտի վրա միայն 9 ու կես
ուրբուգ ինվենտար ունենք: Հինգ տարուց հետո ունե-
նալու յենք 24 ուրբուգ:

Այժմ հասկանալի յե, վոր սխալ են նրանք, վորոնք
ասում են — ի՞նչ կարիք կա ելեքտրոկայաններ կա-

ռուցելու. ինչու ծախսել փողը մետաղ հալելու, գործարաններ կառուցելու համար: Ավելի լավ չի լինի — չիթ և այլ ապրանքներ արտադրել:

Առանց ծանր արդյունաբերության զարգացման մենք անկարող ենք բոլոր հարկավոր ապրանքները տալ յերկրին: Յեւ վոր ամենագլխավորն է — մենք անկարող կլինենք զարգացնել և բարեփոխել յետամնաց գյուղական տնտեսությունը:

ՈՒՃԱՍՊԱՌԻ ԴԱՇՏԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ


Դեռ մինչև այժմ 5 միլիոն բրիչներ քրքրում են խորհրդային դաշտերի հողը: Բրիչն ու անկանոն մշակումը ուժասպառ են արել հողը: Ուժասպառ հողը չի կարող բարձր բերք տալ: Հողին պետք է վերադարձնել նրա պտղաբերությունը:

Պարարտանյութերի արտադրման գործում մենք ուրիշ յերկրներից շատ ու շատ յետ ենք մնացել:

1929 թ. մեր գործարանները միմիայն 175 հազար տոնն պարարտանյութեր տվին (10 միլիոն 675 հազար փութ):

Յեթե պարարտանյութերի այդ քանակությունը հավասար կերպով բաժանենք բոլոր հերկադաշտի քանակության վրա, ամեն մի հեկտարին ընկնելու յե մեկ ու կես կիլոգրամ (հեկտարը մոտ մի դեսյատին է = 2.200 քառակուսի սաժեն):

Ցարական Ռուսաստանում պարարտանյութերն ավելի սակավ էր արտադրվում: Գերմանիան իր տարածությունում մի քանի անգամ ավելի փող է քան իՍՏՄ, իսկ պարարտանյութեր մի քանի անգամ ավելի շատ է գործադրում քան մենք: Պարզ է վոր Գերմանիայում բերքն էլ համեմատաբար շատ ավելի բարձր է քան թե մեզ մոտ:



Պարարտանյութերի արտադրությունը (այժմ և 1933 թ.)

Պարարտանյութեր արտադրելու գործում մեր յետամնացությունը ինչ էլ վոր լինի պետք է վերջ դնենք:

Հինգ տարվա ընթացքում մենք կառուցելու յենք պարարտանյութերի գործարաններ Ուրալում, Մոսկվայի մոտ, Դնեպրոստրոյի մոտ: 1933 թ. գյուղա-

ցիւղթյունը կստանան 8 միլիոն տոնն պարարտանյութեր (488 միլիոն փութ)։ Սակայն այդ ևս դեռ բավական չէ խորհրդային ընդարձակ դաշտերի համար։ Բայց դա անագին քայլ կլինի դեպի առաջ։ Պարարտանյութերի այդ քանակությունը մոտ մեկ միլիարդ ռուբլու հաց կավելացնի մեզ։

Գործարանները տալու յեն նաև թույններ՝ ցանքսի փնտխներին (մորելս, աշնան վորդ, մկներ և այլն) փոչնչացնելու համար։

Արդյոք շնտ են փնտսում այդ փնտխները։ Բանից յերևում է վոր չափազանց շատ։ Վնասիչների հրոսակները մի տարվա ընթացքում նույնքան հաց են խժռում վորքան ուտում են գյուղացիները — 30 միլիոն տոնն։

Խորհրդային արդյունաբերությունը գյուղացիներին կողմի ազատվելու այդ փնտխներից։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՖԱԲՐԻԿՆԵՐ

Կուբանում, Սալսկի շրջանում դեռ մի տարի առաջ անագին տարածություն ծածկված էր անպետք խոտով։ Բարձիթող արած հողի վրա միայն տատասկ էր բսնում։ Վոչ գութան, վոչ բրիչ յերբեք չեր զբոսնել այնտեղ։

Իսկ այժմ այնտեղ այլևս տատասկ չկա։ Տափաստանի տեսքը կերպարանափոխվել է։ Բարձիթող արած

հողի վրա սիւլված է անագին սովխոգ։ Նա գրավում է 150 հազար հեկտար (137 հազար դեսյատին)։

600 տրակտորներ խորը ակոսել են յերբեք չհերկած հողը։ 1929 թ. գարնան տափաստանն առաջին անգամ ծածկվեց կանաչ ցանքսով։

Այդ սովխոգը կարելի չէ կոչել հացահատիկների ֆաբրիկ։ Բոլոր դաշտային աշխատանքներն այնտեղ կատարվում են մեքենաներով։

Այդ ֆաբրիկը մեկ տարվա ընթացքում այնքան հաց է տալու, վոր ամբողջ Հայաստանը յերկու տարի կերակրելու համար բավական կլինի։

Իսկ Սալսկի սովխոգը հացահատիկների ֆաբրիկաների շինարարության դեռ միայն սկիզբն է։ Արդեն շինվում են կամ նիշված են շինելու համար այդ տեսակ 11 խոշոր սովխոգներ Սիբիրում, Ուրալում և ուրիշ տեղերում։ Մինչև 1933 թ. ընդամենը կազմակերպվելու յեն 125 խոշոր սովխոգներ։ Դրանց համար կհարկավորվեն 15 հազար տրակտորներ և զանազան մեքենաներ՝ 150 միլիոն ռուբլու արժողությամբ։ Սովխոգները գրավելու յեն մոտ 3 միլիոն հեկտար հող։

1932 թ. սովխոգները տալու յեն պրոլետարական պետությանը մեկ միլիոն 640 հազար տոնն հացահատիկներ։

Այդպես է անա վերաշինում բանվոր դասակարգը խորհրդային յերկիրը։ Բանվորների կամքով՝ բարձիթող արած հողերը կերպարանափոխվում են ծաղկած դաշ-

տերի: Միայն քաղաքներում չէ, վոր ֆաբրիկներ են աճում: Դաշտերումն էլ աճում են հացահատիկների արտադրության ֆաբրիկներ:

Խորհրդային հացահատիկների ֆաբրիկները ոգնություն են հասցնելու չքավոր և միջակ գյուղացիներին: Նրանք կոգնեն մեր գյուղական տնտեսությունն արագ բարեփոխելու:

ԿՈՒՆՈՋՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ


Մեր յերկրում կային բազմաթիվ այնպիսի գյուղեր, ուր իրենց սեփական հացը մի տարի հերիք չեր անում: Նրանք մինչև որս էլ այդպես կապրեյին, բայց խելքները կտրեց կազմակերպել կոլխոզ և գնել տրակտոր: Տրակտորից է վոր ամեն ինչ սկսվեց: Տրակտորն արտելում հերկում է, փոցխում է հողը, կախում է, ծանրություններ տեղափոխում: Տրակտորը գործ է կատարում ամբողջ գյուղի համար:

Այդ կոլխոզներում յերկու տարվա ընթացքում բերքը յերկու անգամ ավելացել է: Հացը սկսեց հերիք անել, և նույնիսկ ֆնում է ծախելու համար: Տրակտոր գնելուց առաջ այդպիսի գյուղերում ապրում էյին հարուստ կուլակներ: Նրանք բոլոր գյուղացիներին իրենց ձեռքում էյին պահում, բոլորը պարտ էյին կուլակներին:

Տրակտորը շուտով ազատեց գյուղացիներին կուլակի ցանցերից: Տրակտոր ստանալուց հետո չքավորներն այլևս մեջքը չեն թեքում կուլակի առաջ:

ԽՍՀՄ մեջ ներկայումս 35 հազար կոլխոզ կա:

Գյուղացիներն արդեն հասկացան կոլխոզների շահը: Ուստի և կոլխոզների թիվը տարեցտարի աճում է:



Կուլեկաիվ տնտեսությունների (կոլխոզների) աճումը (այժմ և 1933 թ.)

Կոլխոզների այդ աճումը նպաստում է մեր գյուղի բարգավաճման: Անշատ-անշատ մանր տնտեսությունների համար դժվար է պայքարել բարձր բերք ստանալու համար: Անշատ-անշատ չքավոր գյուղացիներն անկարող են իրենց տնտեսությունը բարգավաճել: Հողի կանոնավոր մշակումը ամենից հեշտ է կոլխոզ-

ներում կարգավորել: Բարձր բերք կարելի չէ հեշտում-
թյամբ ստանալ միմիայն կոլխոզներում: Կոլխոզներն
են վոր կտրելու յեն գյուղում կուլակները արմատ-
ները: Կուլակն ուժեղ է այնտեղ, ուր չքավորն ու
միջակ գյուղացիները բաժան բաժան են:

Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը
գյուղացիներին կոչ է անում դիմել դեպի կոլխոզների շի-
նարարության ուղին: Հինգամյա պլանը հենց այդ ուղ-
ղությամբ է զարգացնելու գյուղական տնտեսությունը:

Խորհրդային արդյունաբերությունը գյուղացիներ-
ին տալիս է արահտորներ, մեքենաներ, պարարտա-
նյութեր: Սակայն ձեռք բերել բոլոր կարևոր մեքե-
նաներն ու բավականաչափ պարարտանյութեր, չքա-
վոր և միջակ գյուղացիները կարող են միայն կոլխոզ-
ների միջոցով: Կոլխոզը գյուղական տնտեսության
զարգացման ուղիղ ճանապարհն է:

«Գյուղական տնտեսության արտադրողականու-
թյան այն խզճուկ աստիճանը, վորի վրա կանգնած է
նա, կարելի չէ բարձրացնել միայն այն դեպքում, յերբ
այդ մանր, ցածուցրիվ տնտեսությունները կոլլեկտիվ
սկզբունքով կսկսեն աշխատել»:

Հինգ տարվա ընթացքում կոլխոզների աճումը այս-
պես է կատարվելու. — այժմ մենք կոլխոզների մեջ
ունենք 116 հազար տնտեսություն: 1933 թվին կոլ-
խոզներում կունենանք վոչ պակաս քան $1\frac{1}{2}$ միլիոն
տնտեսություն:

Դա ցույց է տալիս, վոր հինգ տարվա ընթացքում
մեր գյուղական տնտեսությունը արմատապես բարե-
փոխվելու յէ: Մեր մանր, աղքատ տնտեսություն-
ների փոխարեն յերևան են գալու կոլխոզներ ու կու-
սակներ:

Հինգ տարուց հետո կոլխոզներն ու սովխոզները
տալու յեն մեզ ամբողջ բերքի մի վեցերորդ մասը:

ԲԱՐՁՐԱՅՆՆԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ մենք տեսնում ենք թե հինգ տարվա ընթաց-
քում խորհրդային շինարարությունը թե քաղաքում
և թե գյուղերում ինչ վիթխարի թափ է առնելու:

Բանվոր դասակարգն աշխատավոր գյուղացիության
հետ դաշնադիր, մեր կուսակցության դեկավարու-
թյամբ հինգ տարվա ընթացքում մեր տնտեսության
բոլոր ճյուղերում ահապին աշխատանք է կատարելու:
Ուրիշ վոչ մի յերկրում անհնարին է տնտեսության
այդպիսի արագ զարգացում, քանի վոր այնտեղ իշխա-
նությունը գտնվում է կապիտալիստների ձեռքում:
Ներկայումս ամենահարուստ և ամենազարգացած պե-
տության մեջ — Ամերիկայում, տնտեսությունը աճում
է մի քանի անգամ ավելի դանդաղ քան խորհրդային
տնտեսությունը:

Շինարարական աշխատանքների լայն թափը շատ
փող է պահանջելու մեզնից: Խորհրդային իշխանու-

թյունը 5 տարվա ընթացքում բաց է թողնելու արդյունաբերություն և գյուղական տնտեսություն համար 64 միլիարդ ռուբլի:

Սակայն այդ ահագին գումարն էլ հերիք չի անելու: Հարկավոր է մի տեղից դարձյալ միջոցներ ձարել շինարարության համար:

Պլանում ցույց է տրված թե վորտեղ կարելի չէ այդ միջոցները գտնել:

Փաբրիկներն ու գործարանները պետք է եժան արտադրեն: Հարկավոր է իջեցնել արտադրվող ապրանքների ինքնարժեքը — հինգ տարվա ընթացքում 35% (ռուբլուց — 35 կոպեկ):

Յենթադրենք, վոր այժմ ճոթեղենի ֆաբրիկին 1 մետրը նստում է մի ռուբլի: 1933 թ. ճոթի մետրը ֆաբրիկին պետք է նստի վոչ ավել քան 65 կոպեկ:

Ինքնարժեքի իջեցումը մեզ շատ մեծ խնայողություն է տալու: Այդ խնայողությունը ամբողջովին գործադրվելու չէ նոր շինարարության, տնտեսության վերելքի համար:

Պլանում ցույց է տված նաև, թե ինչ ճանապարհով պետք է մոտենալ ինքնարժեքի իջեցման հարցին:

Մեր նոր ֆաբրիկներում և գործարաններում ամենալավ մեքենաներ և ստանդկներ են հաստատվում: Բայց հին ֆաբրիկներում դեռ մնում են նաև հին մեքենաները: Դրանք պետք է փոխարինվեն նոր մեքենաներով և ստանդկներով: Այդ ևս աշխատանքի ար-

տադրողականությունը, յուրաքանչյուր բանվորի արտադրանքը խիստ բարձրացնելու չէ:

Յուրաքանչյուր ֆաբրիկում, յուրաքանչյուր գործարանում պետք է շակել աշխատանքի բոլոր թերությունները, բոլոր միջոցներով բարելավել աշխատանքը: Դրա շնորհիվ էլ աշխատանքի արտադրողականությունը կբարձրանա:

Փաբրիկներում սակավ չեն պրոգուլներ, հարբեցողություն: Պատահում է, վոր բանվորները վատ են վերաբերվում իրենց աշխատանքին: Պրոգուլներին, հարբեցողության, անվությունության պետք է վերջ դնել: Այն ժամանակ աշխատանքի արտադրողականությունը կավելանա: Բաց թողած ապրանքների քանակությունը կավելանա: Ինքնարժեքը կիջնի:

«Աշխատանքի արտադրողականությունը — վերջիվերջո ամենից կարևորն է, ամենից գլխավորն է նոր հասարակակարգի հաղթանակի համար».— այսպես էր գրում ընկ. Լենինը հոգվածներից մեկում:

Իյիչի այս խոսքերից յերևում է, թե ինչպիսի նշանակություն ունի մեր տնտեսության համար աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

Հինգ տարվա ընթացքում աշխատանքի արտադրողականությունը պետք է յերկու անգամ ավելանա: Յուրաքանչյուր բանվոր 5 տարուց հետո պետք է յերկու անգամ ավելի ապրանքներ և գործվածքներ արտադրի քան թե այժմ:

Կուսակցութիւնը դիմեց բոլոր բանվորներին և կոչ արեց վորպեսզի նրանք պայքարեն արտադրութիւնը լավացնելու, աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու համար:

Յեւ վ խորհրդային Միութեան բանվորները մեծ արձագանք տվին այդ կոչին:

Ֆաբրիկներն և գործարանները ներկայումս ստուգում են իրենց աշխատանքը: Բանվորների ինքնաքննադատութիւնը մեծ ոգուտ է բերում: Դա նշանակում է, վոր արտադրութեան բոլոր թերութիւնները մանրակրկիտ քննադատութեան պիտի յենթարկեն բոլոր բանվորները: Բանվորները — արտադրութեան տերերն են: Յեւ ամեն մի բանվոր, վորպես արտադրութեան տեր, ամեն բան ինչ վոր վատ է ֆաբրիկում, նկատում է. նա պահանջում է բոլորից և ինքն ել ձգտում է վորպեսզի բոլոր թերութիւնները վերացվեն:

Ֆաբրիկներն ու գործարանները մրցում են սկսում: Այդ նշանակում է, վոր ֆաբրիկներն և գործարանները պարտավորվում են իրար վերաբերմամբ վորջան կարելի չէ հարթել աշխատանքը, իջեցնել ինքնարժեքը, բարձրագույն աստիճանի հասցնել աշխատանքի արտադրողականութիւնը:

Սոցիալիստական մրցակցութիւնը որ որի վրա լայն ծավալ է ստանում: Ֆաբրիկներն ու գործարանները իրար կոչ են անում և հայտարարում են, վոր ամեն

շանք գործ կդնեն հինգամյա պլանն իրագործելու համար:

Մեր թշնամիները թե յերկրի ներսում և թե արտասահմանում ասում են, վոր հինգամյա պլանը — մտացածին է, նա անիրագործելի չէ:

Սոցիալիստական մրցակցութիւնը, ֆաբրիկներում և գործարաններում աշխատանքի ստուգումը — ամենալավ պատասխանն է մեր թշնամիներին:

Միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ կառուցում են իրենց տնտեսութիւնը և դա վարում են հինգամյա պլանի ցույց տված ուղիով:

Դրանումն է կայանում խորհրդային շինարարութեան ուժը, վոր հաղթելու յե բոլոր խոչընդոտները:

ԱՄԵՆ ԶԱՆՔ ԴՈՐԾ ԴՆԵՆՔԻ ԲԵՐՔԸ ԼԱՎԱՅՆԵԼՈՒ

Ֆաբրիկների և գործարանների բոլոր բանվորները առաջ մի հարց է կանգնած — վորջան կարելի չէ եժան և ավելի շատ մեքենաներ, պարարտանյութեր, ապրանքներ արտադրել:

Գյուղացիների առաջ նույնպես կարևոր հարց է կանգնած — բարձրացնել խորհրդային դաշտերի բերքատվութիւնը:

Բերքատվութեան տեսակետից մեր յերկիրը շատ յետ է մնացել կապիտալիստական յերկրներից:

Բերքատվութիւնը մի հեկտարի. — *

ԽՍՀՄ	Գերմանիա	Ֆրանսիա	Բելգիա
8 ցենտներ**	22 ցենտն.	15 ցենտն.	26 ցենտն.

Անկարելի յե զարգացնել տնտեսութիւնը, յեթե դա աճապիսի բերքատվութիւն ունի, ինչպես մերը: Հարկավոր ե արտակարգ միջոցներ ձեռք առնել բերքատվութիւնը բարձրացնելու համար:

Պորհրդային կառավարութիւնը ցույց ե տալիս գյուղացիներին այդ միջոցները:

Այս միջոցներն առանց դժվարութեան կարող ե գործադրել յուրաքանչյուր տնտեսութիւն: Հարկավոր ե միայն վորպեսզի գյուղացիները կապվեն կոլխոզների ե սովխոզների հետ, լսեն մասնագետների ցուցմունքները ե սերտ կերպով արշավանք սկսեն բերքատվութեան համար:

Պլանի համեմատ հինգ տարվա ընթացքում մեր դաշտերի բերքատվութիւնը պետք ե 35% բարձրացնել: Ներկայումս յեթե մի տնտեսութիւն հավաքում ե, որինակ, 100 ցենտներ հացահատիկ, — հինգ տարուց հետո նա պետք ե հավաքի 135 ցենտներ:


Կոլխոզներում ավելի հեշտ ե բերքատվութիւնը բարձրացնել: Ուստի ե սլանը գտնում ե, վոր նրանց բերքատվութիւնը պետք ե 60% բարձրանա:

* մոտ 1 ղեսայտին

** 1 ցենտները — 6 փութ:

Բանվոր դասակարգը — խորհրդային մեծ շէնքի ղեկավարն ե: Նա ներգրավում ե շինարարութեան մեջ նաե աշխատավոր գյուղացիութիւնը:

Այժմ մեր յերկրի բոլոր մասերում տեղի ունի սոցիալիստական մրցակցութիւն. ֆաբրիկների բանվորները մրցակցութեան կոչ են անում չքավոր ե



Մեկ տնտեսութեան բերկատվութեան (միջին) աճումը (այժմ ե 1933 թ.)

միջակ գյուղացիներին: Բանվորները պարտավորվում են իրենց ֆաբրիկներում աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնել վորոշ տոկոսով, ինքնարժեքը իջեցնել վորոշ տոկոսով, իսկ գյուղացիները պետք ե բարձրացնեն իրենց դաշտերի բերքատվութիւնը ե ավելացնեն ցանքսի մակարդակը:

Գյուղացիներն ել բանվորների որինակով իրար հետ են մրցակցություն սկսում և նպաստում են տնտեսության ամրապնդման:

Դա առհավատչյալ յե վոր մենք գյուղական արնտեսությունը բարեփոխելու յենք: Խորհրդային Միության մեջ ուժասպառ, աղքատ բերքով դաշտեր չեն լինելու: Բանվորների ոգնությամբ գյուղացիները կուխտոցներում և արտելներում բերքատվությունը բարձրացնելու յեն, հասնելու են և առաջ են անցնելու Ամերիկայից, Գերմանիայից, Ֆրանսիայից:

ՀԵՏԵՎԵՆՔ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԻՆ, ՄԵՐ
ԿՈՒՆՏՈՒՐԱՆ ԲԱՐՁՐԱՅՆԵՆՔ

Պլանի նիշած վիթխարի շինարարական աշխատանքների համար հարկավոր են աշխատողներ: Հինգ տարվա ընթացքում խորհրդային արդյունաբերությանը հարկավոր են 34 հազար ինժինեռներ, 45 հազար տեխնիկներ: Գյուղական տնտեսության համար հարկավոր են 25 հազար ագրոնոմներ, 200 հազար տրակտորիստներ և 50 հազար մեքենագետներ:

Այդ խնդիրը — սովորեցնել և տալ յերկրին մասնագետներ — ինչ ել վոր լինի պետք ե իրագործել: Պետք ե ուղարկել բարձր դպրոցները հազարավոր բանվորներ և գյուղացիներ և խորհրդային շինարարության համար անհրաժեշտ ուսում տալ նրանց:

Բացի ինժինեռներից և ագրոնոմներից հարկավոր են լավ վարժված, իրենց գործը զիտցող բանվորներ: Կուրսերում, պրոֆդպրոցներում 5 տարվա ընթացքում 530 հազար բանվորների մենք պետք ե սովորեցնենք զանազան մասնագիտություններ:

Ցարական Ռուսաստանը խայտառակ ժառանգություն ե թողել մեզ — անգրագիտությունը: Այդ ժառանգությունը խանգարում ե մեզ նոր կյանք ստեղծելու:

Անգրագետ գյուղացին չի կարող կանոնավոր կերպով մշակել հողը: Անգրագետ բանվորը չի կարող կառավարել բարդ մեքենաներ և ստանոկներ:

Հինգ տարվա ընթացքում մենք մաքառելու յենք անգրագիտության դեմ վորպես մեր ամենակատաղի թշնամու դեմ: Հինգ տարվա ընթացքում յերկիրը ծածկվելու յե նոր դպրոցների, կուրսերի, ակումբների, գրադարանների ցանցով: Խորհրդային ուսուցիչների ամբողջ բանակն վճռական զրոհ ե տալու մեր սգիտության և կուլտուրական յետամնացության դեմ:

Խորհրդային տնտեսությունը աճում և աճելու յե վոչ այնպես ինչպես աճում են կապիտալիստական յերկրների տնտեսությունը: Այնտեղ ամբողջ ողուտը, կյանքի բոլոր բարիքները վերապահված են ֆաբրիկաներին և կալվածատերերին:

ԽՍՀՄ մեջ տնտեսության աճման հետևանքը աշխատավորների դրության բարելավումն ե:

Ամեն տարի խորհրդային կառավարությունը ավելի ու ավելի շատ փող է ծախսելու զպրոցների, ախումբների, գրադարանների համար և այլն:

Հինգ տարուց հետո արդեն բոլոր ֆաբրիկներն ու գործարանները անցնելու յեն 7 ժամ. աշխատանքի որին:

Նոր ֆաբրիկներն ու գործարանները պահանջելու յեն բազմաթիվ նոր բանվոր ուժեր: Գործազրկությունը կպակասի: Բանվորների աշխատավարձը մեկ ու կես անգամ ավելանալու յե: Գյուղական տնտեսությունը կզարգանա և չքավոր ու միջակ գյուղացիություն կենցաղը կլավանա: Նշանակում է զարգանալու յե և մեր յերկրի կուլտուրան:

Այնտեղ, ուր կարիք և աղքատություն կա, դժվար է պայքարել գիտության և կուլտուրայի համար:

Նշանակում է հինգ տարուց հետո ամբողջ խորհրդային տնտեսության աճման հետ բարձրանալու յե և բանվորների ու գյուղացիների կուլտուրական մակերևույթը: ԽՍՀՄ աշխատավոր մասսաները կտիրանան այն գիտություններին, վորոնք անհրաժեշտ են նոր կյանքի շինարարության համար:

ՀԻՆԳ ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ

Հինգ տարուց հետո յերկրում կունենանք հարյուրավոր նոր խոշոր ֆաբրիկներ ու գործարաններ վորոնք սարքված կլինեն ամենալավ մեքենաներով:

Կունենանք մոտ հարյուր նոր շախտաներ, վոր մեզ կտան բավական քանակությամբ ածուխ: Յերկարթուղիների ցանցը կավելանա 20 հազար կիլոմետրով:

Խորհրդային յերկրի զանազան անկյուններում կհիմնվեն նոր գյուղեր և քաղաքներ: Մենք կողտագործենք ամայի, անբերրի հողերը և դրանք կզարձենենք պտղատու դաշտեր: Ուժասպառ հողերին պարարտանյութեր կտանք:

Գյուղացիք (չքավոր և միջակ) բանվոր դասակարգի ոգնությունը իրենց տնտեսությունը կբարեփոխեն և բերքատվությունը 35% կբարձրացնեն:

Գլխավոր ուժերը մենք կուղղենք ծանր արդյունաբերության զարգացման վրա: Մենք կապահովենք խորհրդային Միությունը չուգունով, ածուխով, մեքենաներով: Յերկիրը կծածկենք զորեղ ելեքտրոկայանների ցանցով:

Հինգ տարուց հետո արդյունաբերությունը յերեք անգամ կմեծանա: Ժողովրդական տնտեսության մեջ գլխավոր տեղը պատկանելու յե արդյունաբերության և վոչ թե գյուղական տնտեսության, ինչպես մինչև այժմ: Արդյունաբերությունը իր յետից տանելու յե տնտեսության բոլոր ճյուղերը: Մենք կվերացնենք ապրանքների պակասությունը: Ֆաբրիկների և գործարանների արագ աճումը առաջ է բերելու գյուղական տնտեսության արագ աճումն: Գյուղը կստանա: հարյուր հազարավոր տրակտորներ և մեքենաներ:

Ամեն տարի խորհրդային կառավարությունը ավելի ու ավելի շատ փող է ծախսելու դպրոցների, ահումբների, գրադարանների համար և այլն:

Հինգ տարուց հետո արդեն բոլոր ֆաբրիկներն ու գործարանները անցնելու յեն 7 ժամ. աշխատանքի որին:

Նոր ֆաբրիկներն ու գործարանները պահանջելու յեն բազմաթիվ նոր բանվոր ուժեր: Գործադրկությունը կպակասի: Բանվորների աշխատավարձը մեկ ու կես անգամ ավելանալու յե: Գյուղական տնտեսությունը կդարգանա և չքավոր ու միջակ գյուղացիություն կենցաղը կլավանա: Նշանակում է զարգանալու յե և մեր յերկրի կուլտուրան:

Այնտեղ, ուր կարիք և աղքատություն կա, դժվար է պայքարել գիտության և կուլտուրայի համար:

Նշանակում է հինգ տարուց հետո ամբողջ խորհրդային տնտեսության աճման հետ բարձրանալու յե և բանվորների ու գյուղացիների կուլտուրական մակերևույթը: ԽՍՀՄ աշխատավոր մասսաները կտիրանան այն գիտություններին, վորոնք անհրաժեշտ են նոր կյանքի շինարարության համար:

ՀԻՆԳ ՏԱՐՈՒՅ ՀԵՏՈ

Հինգ տարուց հետո յերկրում կունենանք հարյուրավոր նոր խոշոր ֆաբրիկներ ու գործարաններ վորոնք սարքված կլինեն ամենալավ մեքենաներով:

կունենանք մոտ հարյուր նոր շախտաներ, վոր մեզ կտան բավական քանակությամբ ածուխ: Յերկաթուղիների ցանցը կավելանա 20 հազար կիլոմետրով:

Խորհրդային յերկրի զանազան անկյուններում կհիմնվեն նոր գյուղեր և քաղաքներ: Մենք կոգտագործենք ամայի, անբերրի հողերը և դրանք կդարձնենք պտղատու դաշտեր: Ուժասպառ հողերին պարարտանյութեր կտանք:

Գյուղացիք (չքավոր և միջակ) բանվոր դասակարգի ոգնությունը իրենց տնտեսությունը կբարեփոխեն և բերքատվությունը 35% կբարձրացնեն:

Գլխավոր ուժերը մենք կուղղենք ծանր արդյունաբերության դարգացման վրա: Մենք կապահովենք խորհրդային Միությունը չուգունով, ածուխով, մեքենաներով: Յերկիրը կծածկենք զորեղ ելեքտրոկայանների ցանցով:

Հինգ տարուց հետո արդյունաբերությունը յերեք անգամ կմեծանա: Ժողովրդական տնտեսության մեջ գլխավոր տեղը պատկանելու յե արդյունաբերության և վոչ թե գյուղական տնտեսության, ինչպես մինչև այժմ: Արդյունաբերությունը իր յեաից տանելու յե տնտեսության բոլոր ճյուղերը: Մենք կվերացնենք ապրանքների պակասությունը: Ֆաբրիկների և գործարանների արագ աճումը առաջ է բերելու գյուղական տնտեսության արագ աճումն: Գյուղը կստանա հարյուր հազարավոր տրակտորներ և մեքենաներ:

Գյուղը միանգամայն կկերպարանափոխվի: Միայն կոլ-
խոզները մեջ միավորված կլինին վեց միլիոն տնտե-
սություններ:

Հինգ տարվա ընթացքում գյուղական տնտեսու-
թյունը մեծանալու յե յերկու անգամ:

Ահա թե ինչ վիթխարի խնդիրներ ենք լուծելու
հինգ տարվա ընթացքում:

Վոչ մի կապիտալիստական յերկիր մտածել ան-
գամ չի կարող այդպիսի արագ զարգացման մասին:

Այնտեղ տնտեսության արագ զարգացման խոչ-
ընդոտ են հանդիսանում իրենք ֆաբրիկաներն ու
կալվածատերերը: Նրանք հոգս են տանում վոչ թե
յերկրի ընդհանուր տնտեսության մասին, այլ իրենց
շահույթները մասին:

Հինգամյակի վերջը մեր տնտեսությունը խիստ
մոտենալու յե առաջագետ կապիտալիստական պետու-
թյունների տնտեսության մակերևույթին: Պողպատ
արտադրելու գործում մենք գերազանցելու յենք Ան-
գլիային: Չուգուն հալելու գործում վեցերորդ տեղից
անցնելու յենք յերրորդ տեղը (Գերմանիայից և Ամե-
րիկայից հետո):

Խորհրդային տնտեսությունը արմատապես տար-
բերվում է կապիտալիստական յերկրների տնտեսու-
թյունից: Այնտեղ ամեն բան պատկանում է ֆաբրի-
կանտներին և կալվածատերերին: ԽՍՀՄ մեջ ներկա-
յումս յերկրի ամբողջ կարողության կեսը պատկա-

նում է պրոլետարական պետության և խորհրդային
կոոպերացիային: Հինգամյակի վերջը ամբողջ կարո-
ղության յերկու յերրորդ մասը (գյուղական տնտե-
սությունն էլ հաշված) պատկանելու յե պետությանը
և կոոպերացիային և միայն մի յերրորդ մասը՝ մաս-
նավոր սեփականատերերին (առանձին գյուղացիական
տնտեսություններին և ուրիշ անձանց):

Դա անագին նշանակութուն ունի: Դա ցույց է
տալիս, վոր կոմունիստական կուսակցությունը սոցիա-
լիզմի ուղիով է առաջ տանում խորհրդային յերկիրը:
Մենք կմոտենանք այն ժամանակին, յերբ մասնավոր
սեփականությունն այլևս գոյություն չի ունենալու,
չեն լինելու վոչ դասակարգեր, վոչ կուլակներ գյու-
ղում և վոչ էլ նեպոմաններ քաղաքում, իսկ տնտեսու-
թյունը հասնելու յե անագին բարձրության:

Ամբողջ տնտեսության աճման հետ բարելավվելու
յե բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության
կյանքը: Հինգ տարվա ընթացքում բարձրանալու յե
գրագիտությունն ու կուլտուրան: Խորհրդային յերկրի
աշխատավորները կտիրապետեն մեր մեծ շենքի հա-
մար անհրաժեշտ գիտություններին:

Միլիոնավոր բանվորների և գյուղացիների ձեռքով
ԽՍՀՄ մի քանի անգամ ավելի արագ է բարձրացնում
իր տնտեսությունը քան թե կապիտալիստները՝ իրենց
տնտեսությունը: Դա նշանակում է, վոր մենք կհաս-
նենք և առաջ կանցնենք կապիտալիստական յերկր-

հերից: Դա ծառայում է իբրև գրավական այն բանի,
վոր բանվոր դասակարգն, աշխատավոր գյուղացիու-
թյան հետ դաշնակցած, կոմունիստական կուսակցու-
թյան ղեկավարութեամբ, կկառուցի սոցիալիզմը մեր
յերկրում:



ՊԱՀԱՆՁԵՑԵՔ

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՁՐԻ.

ԴԻՄԵԼ՝ Москва, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0205886

5 400.

29312

29. 136



**Наше хозяйство
через пять лет**

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10